



Հրավեր

Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանը հրավիրում է մասնակցելու մինչև 35 տարեկան Երիտասարդ գիտաշխատողների, հետազոտողների և մագիստրոսների «Երիտասարդ հետազոտող և նորարար» հանրապետական գիտաժողովին, նվիրված Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերի հիմնադրման 60 ամյակին:

Գիտաժողովը կայանալու է 2019թ. սեպտեմբերի 25-27-ը

Գիտաժողովի ծրագիրը մասնակիցներին կուղարկվի լրացուցիչ:

Մինչև սեպտեմբերի 05-ը՝ ժամը 17⁰⁰-ն, ընդունվում են մասնակցության հայտեր գիտաժողովի հետևյալ բաժանմունքներում, որոնք աշխատելու են Գյումրիում և Վանաձորում:

Գյումրիում աշխատող բաժանմունքներ (Գյումրի, Մ.Մկրտչյան փ. 2.)

1. Հումանիտար, հասարակական գիտություններ, բուհական դասավանդման մեթոդիկա
2. Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և համակարգչային գրաֆիկա

Վանաձորում աշխատող բաժանմունքներ (Վանաձոր)

4. Ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ
5. Տնտեսագիտություն և կառավարում

Ներկայացվող պահանջներ

1. Հրանցման հայտ
2. Համառոտագիր՝ 250 բառի սահմանում
3. Գիտաժողովի զեկուցում՝ 4-6 էջ:
4. 1-3 կետերում նշված փաստաթղթերը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով gymri@seua.am հասցեով, կամ էլեկտրոնային գրանցման միջոցով՝ հետևյալ հղումով
<https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScus-0fyfPhPdIsVbTTKcZERkvZokul4Ynewn1QJp0tjFZQ0A/viewform>

Գիտաժողովի մասնակցության պայմանները

1. **Բոլոր** զեկուցումների համառոտագրերը նախապես տպագրվում են:
2. Գիտաժողովի լրիվ նյութերի ժողովածուի մեջ **ընդգրկվում են միայն** զեկուցված և դրական գրախոսություն անցած հոդվածները:
3. 1 և 2 կետերում նշված նյութերը տպագրվում են կազմակերպիչի միջոցներով (հեղինակները չեն վճարում):
4. Ըստ անհրաժեշտության կառաջարկվեն հյուրանոցային համարներ (վճարումը կատարում է հեղինակը)

Համառոտագիրը և հոդվածը պետք է ներկայացնել հավաքված **Microsoft Word 2007 կամ ավելի բարձր սերիայի տեքստային խմբագրիչով** հետևյալ ձևաչափով:
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Տեքստը շարադրվում է A4 չափսի թղթի վրա, աշխատանքային դաշտը՝ Top-2 սմ, Bottom-2սմ, Left-2սմ, Right-1,8սմ, Footer-1,5սմ, միջտողային տարածությունը (Line spacing)՝ 1,15, պարբերությունը (First line)՝ 0,75 սմ: Հայերեն լինելու դեպքում նյութը շարադրվում է GHEA Grapalat տառատեսակով, տառաչափը՝ 10, իսկ ռուսերենի կամ անգլերենի դեպքում՝ Times New Roman տառատեսակով, տառաչափը՝ 11:

2. Թղթի վերևի ձախ անկյունում գրվում է համալիտանի տասնորդական դարականիչը՝ տեքստին համապատասխան լեզվով (ՀՏԵ, ՄԴԿ, ՍԾԸ), հաջորդ տողի կենտրոնում՝ գլխատառերով հեղինակ(ներ)ի անվան-հայրանվան սկզբնատառերը և ազգանուն(ներ)ը՝ bold, 10 տառաչափով հայերեն տեքստի դեպքում և 11 տառաչափով՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի դեպքում: Հոդվածի վերնագիրը տրվում է հեղինակի ազգանվանը հաջորդող տողի կենտրոնում՝ bold, ամբողջությամբ գլխատառերով՝ 10 տառաչափով հայերեն տեքստի դեպքում և 11 տառաչափով՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի դեպքում: Տեքստը՝ առանց աղյուսակների, նկարների և բանաձևերի, ծավալը մինչև 250 բառ:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵՎՈՒՑՄԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Զեկուցման տեքստը կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ծավալը 4-6 էջ, երկու օրինակ և էլեկտրոնային տարբերակով:

Տեքստը շարադրվում է A4 չափսի թղթի վրա, աշխատանքային դաշտը՝ Top-5սմ, Bottom-4,75սմ, Left-6,2սմ, Right-1,8սմ, Footer-4,5սմ, միջտողային տարածությունը (Line spacing)՝ 1,15, պարբերությունը (First line)՝ 0,75 սմ: Հայերեն լինելու դեպքում նյութը շարադրվում է GHEA Grapalat տառատեսակով, տառաչափը՝ 10, իսկ ռուսերենի կամ անգլերենի դեպքում՝ Times New Roman տառատեսակով, տառաչափը՝ 11:

2. Թղթի վերևի ձախ անկյունում գրվում է համալիտանի տասնորդական դարականիչը՝ տեքստին համապատասխան լեզվով (ՀՏԵ, ՄԴԿ, ՍԾԸ), հաջորդ տողի կենտրոնում՝ գլխատառերով հեղինակ(ներ)ի անվան-հայրանվան սկզբնատառերը և ազգանուն(ներ)ը՝ bold, 10 տառաչափով հայերեն տեքստի դեպքում և 11 տառաչափով՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի դեպքում: Հոդվածի վերնագիրը տրվում է հեղինակի ազգանվանը հաջորդող տողի կենտրոնում՝ bold, ամբողջությամբ գլխատառերով՝ 10 տառաչափով հայերեն տեքստի դեպքում և 11 տառաչափով՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի դեպքում:

3. Նյութը սկսվում է ամփոփումով (անոտացիա) այն լեզվով, որով ներկայացված է: Ամփոփումն ավարտվում է առանցքային բառերով՝ տառաչափը՝ 9 հայերեն տեքստի դեպքում և 10 տառաչափով՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի դեպքում, և միայն «Առանցքային բառեր» արտահայտությունը՝ bold, italic: Ամփոփումը պետք է լինի մինչև 5 տող, առանցքային բառերը կամ բառակապակցությունները՝ 4-8 բառ:

4. Երաշխավորվում է նյութի շարադրման հետևյալ կարգը. «Ներածություն», որը պետք է համառոտ ներառի հարցի վիճակը, թեմայի արդիականությունը և հետազոտության նպատակը, «Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը», «Հետազոտության արդյունքները», «Եզրակացություն»:

5. Տեքստում հղումները գրականությանը նշվում են ուղղանկյուն փակագծերով: Բանաձևերը ներկայացվում են նոր տողից, Equation Editor ծրագրով, italic, տառաչափը՝ 11, անհրաժեշտության դեպքում համարակալվում են տողի վերջում՝ սովորական (կոր) փակագծում:

6. Նկարներն ու աղյուսակները հաջորդում են տեքստում համապատասխան հղումներին: «Նկ.» և «Աղյուսակ» բառերը, նկարների մակագրությունը և աղյուսակների անվանումները գրվում են Italic 9 տառաչափով հայերեն տեքստի դեպքում և 10 տառաչափով՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի դեպքում: «Աղյուսակ» բառը գրվում աղյուսակի վերևի աջ անկյունում:

7. Տեքստին հաջորդում է գրականության ցանկը՝ 9 տառաչափով հայերեն տեքստի դեպքում և 10 տառաչափով՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի դեպքում, միայն հեղինակի ազգանունն ու անվան-հայրանվան սկզբնատառերը՝ bold, «Գրականության ցանկ» արտահայտությունը՝ տողի կենտրոնում, գլխատառերով: Ցանկում գրականության յուրաքանչյուր աղբյուր համարակալվում է ըստ տեքստում իր հղման հերթականության: Գրականության աղբյուրները պարբերական հրատարակությունների դեպքում ներկայացվում են հետևյալ կարգով. հեղինակի ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, վերնագիրը, հանդեսի անվանումը կամ ընդունված հապավումը, հրատարակման տարեթիվը, հատորի ու թողարկման համարները, հերթական համարը, նյութի զետեղման էջերը, գրքերի դեպքում՝ հեղինակի ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, վերնագիրը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը, էջերի քանակը:

8. Գրականության ցանկին հաջորդում են ամփոփումները մյուս երկու լեզուներով (եթե տեքստը հայերեն է, ամփոփումները նախ՝ ռուսերեն, ապա՝ անգլերեն, եթե ռուսերեն է, նախ՝ հայերեն, ապա՝ անգլերեն, եթե անգլերեն է, նախ՝ հայերեն, ապա՝ ռուսերեն): Ամփոփումները բոլոր երեք լեզուներով իրենց բովանդակությամբ և առանցքային բառերով պետք է լինեն նույնական:

9. Առանձին էջով ներկայացվում է (են) հեղինակ(ներ)ի ազգանուն, անուն, հայրանունը (լրիվ), աշխատավայրի, սովորելու վայրի լրիվ անվանումը, զբաղեցրած պաշտոնը, գիտական աստիճանը, հեռախոսահամարները (աշխատանքային, տան և բջջային):

Տեքստը ստորագրում են հեղինակները:



Գրանցման հայտ

Առաջին հեղինակի ազգանուն, անուն,

ծննդյան թիվ _____, _____ թ.

Աշխատանքի (ուսման) վայրը

Զարադեցրած պաշտոնը

Գիտական աստիճանը

Բաժանմունք, համար

Հոդվածի վերնագիրը

Հեռախոս

Էլ-փոստ

Գիտաժողովի մասնակցության ձևը

առկա (հեռակա)

Հյուրանոցի անհրաժեշտությունը

այո / ոչ

Հեղինակների ազգանուն, անուն, ծննդյան թիվ 1. _____, _____ թ.

2. _____, _____ թ.

3. _____, _____ թ.

Կարելի է ներբեռնել հետևյալ հղմամբ _____



РЕГИСТРАЦИОННАЯ КАРТА

Фамилия, имя и год рождения первого автора _____, _____ Г.

Место работы (учебы) _____

Занимаемая должность _____

Научная степень _____

Секция, номер _____

Наименование статьи _____

Телефон _____

E-mail _____

Форма участия в конференции _____

очная / заочная

Требуется ли гостиница _____

да / нет

Фамилия, имя и год рождения соавторов 1. _____, _____ Г.

2. _____, _____ Г.

3. _____, _____ Г.

Вы можете скачать по следующей ссылке _____